



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 15 ՅՈՒՆԻՍ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 145

ՆԵՐՔՈՂ ՏԻՐՈՋ

Պիտի փառաբանեմ քեզ, իմ Թագաւոր Աստուածս,
քու անունդ պիտի օրհնաբանեմ յաւիտեանէ յաւիտեան:
Բարեգութ եւ ողորմած է Տէրը, համբերապար եւ սիրով լեցուն:
Թագաւորութիւնդ բոլոր ժամանակներուն համար է,
եւ Կերութիւնդ՝ բոլոր սերունդներուն համար:
Տէրը հաւաքարիմ է իր բոլոր խոստումներուն մէջ,
նախանձախնդիր է իր բոլոր գործերուն մէջ:
Տէրը նեցուկ կը կանգնի անոնց՝ որոնք իյնալու վրայ են,
եւ ոտքի կը կանգնէ բոլոր գորածները:
Տէրը մօտիկ է անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն,
բոլոր անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն անկեղծութեամբ:
Անիկա իրմէ ակնածողներուն փափաքը կը կտրարէ,
անոնց աղօթքը կը լսէ եւ կը փրկէ զանոնք:
Տէրը կը պահէ բոլոր զինք սիրողները,
մինչ կորուսարի կը մարնէ բոլոր ամբարիշտները:
Ես օրհներգութիւն պիտի ընծայեմ Տիրոջ,
եւ թող ամէն արարած օրհնաբանէ անոր սուրբ անունը
յաւիտեանէ յաւիտեան: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեցոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ

43 ԳԼՈՒԽ

ԵՐԵՄԻԱ ԵՐԳԻՊՏՈՍ ԿԸ ՏԱՐՈՒԻ (43:1-13)

Եթէ Երեմիայէն կը խնդրեն, որ Ասպուծոյ աղօթէ, եւ Երեմիա կ'աղօթէ եւ հետեւեալ պատասխանը կու տայ, որպէս պատգամ Ասպուծոյ կողմէ փրուած թէ Եգիպտոս պէտք չէ իջնեն, այլապէս հոն պիտի սպաննուին, մանաւանդ՝ խոտարացած էին, թէ անոնք մտիկ պիտի ընեն ինչ որ Ասպուծ պատասխան տայ անոնց, բայց ահա արդէն կու գայ ըսելու, Երեմիային, թէ **«Դուն սուտ կը խօսիս, մեր Տէր Ասպուծը քեզ չորկեց, որ մեզի ըսես թէ Եգիպտոս մի մտնէք հոն պանդխտանալու համար»** (2 հմբ):

1. Եթէ Երեմիա մարգարէն սուտ էր, ապա ինչո՞ւ անոր դիմեցին աղօթք ընելու համար, ու մանաւանդ՝ խոտարացան ու երդում ըրին, ըսելով **«Մեր Տէր Ասպուծոյն ձայնին պիտի հնազանդինք»** (42:6):
2. Խորքին մէջ անոնք պատրաստ չէին, լսելու ու հնազանդելու Ասպուծոյ ձայնին, որովհետեւ անոնք կ'ուզէին լսել ինչ որ իրենց հաճելի է:

Ահա Տէրը սկիզբէն իմանալով անոնց խորհուրդը, թէ արդէն իսկ կը մտածեն դէպի Եգիպտոս երթալու, որովհետեւ Երեմիա կանխեց ըսելով. **«դուք ձեր հոգիին դէմ նենգութիւն ըրիք»** (42:20): Այս իսկ պատճառով Տէրը կ'ըսէ. **«Ահա ես պիտի դրկեմ ու իմ ծառաս Բաբելոնի Նաբուգոդոնոսը թագաւորը պիտի առնեմ եւ անոր աթոռը այս իմ թաղած քարերուս վրայ պիտի դնեմ ու անիկա իր արքայական խորանը անոնց վրայ պիտի փարածէ եւ պիտի գայ Եգիպտոսի երկիրը պիտի զարնէ. մահուան համար եղողները մահուան, գերութեան համար եղողները գերութեան եւ սուրի համար եղողները սուրի պիտի մտնեն: Եգիպտոսի ասպուծներուն փուններուն մէջ կրակ պիտի բռնկեցնեմ. անիկա զանոնք պիտի այրէ ու զանոնք գերի պիտի փանի եւ անիկա Եգիպտոսի երկիրը պիտի հագնի, ինչպէս հովիւը իր հանդերձը կը հագնի եւ անկէ խաղաղութեամբ պիտի ելլէ»** (43:10-12): Ահա այս պատգամը նշան մըն է ցոյց տալու թէ ուր են այն ասպուծները, որոնք պիտի չկարենան օգնել ոչ իրենք իրենց ոչ ալ Եգիպտոսի կամ Իսրայէլի ժողովուրդին: Միւս կողմէ, այս պատգամով ցոյց կու տայ Ասպուծոյ ամենափրութիւնը, որ Տէրն է բոլորին: